# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1901 հ. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com
վեբ կայք՝ www.stepanavan.am
(374-256) 2-22-33

**«27» «օգոստոսի» «2025թ.»**

***«ՖՈՒԼ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն Սպարտակ Հակոբյանին***
***հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի պողոտա 54բ***
***Հեռախոսահամար՝ 055911121***
***Էլեկտրոնային փոստի հասցե՝ fullconsgroup@gmail.com***

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար անշարժ գույքի (հողամասերի) գնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով Ձեզ հրավիրում ենք մասնակցելու մեկ անձից գնման ընթացակարգին: Նշված ընթացակարգին մասնակցելու ցանկության դեպքում Դուք պետք է ս/թ օգոստոսի 29-ին ժամը 12.00-ին ներկայանաք «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

**Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝** **Ա.Ավագյան**

**«ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40» ծածկագրով գնման ընթացակարգի**

# ՀՐԱՎԵՐ

## «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար անշարժ գույքի (հողամասերի) գնահատման ծառայությունների ձեռքբերման

| Ծառայության | | | | | | մատուցման | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Ընդհանուր /առավելագույն/ գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր /առավելագույն/ քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 70331800 | **Անշարժ գույքի (հողամասերի) գնահատման ծառայություններ** | հատ | 985000 | 19 | հ.Ստեփանավան | 30.12.2025թ |
| | | այդ թվում | | | | | |
| | | Գյուղատնտեսական և գյուղարտադրական նշանակության հողամասերի գնահատման ծառայություններ | հատ | 160000 | 4 | | |
| | | Բնակավայրերի բնակելի և հասարակական կառուցապատման և արտադրական նշանակության հողամասերի գնահատման ծառայություններ | հատ | 825000 | 15 | | |

Գնահատման ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ») մատուցվելու են գույքի տեսակների, անվանումների ու գտնվելու վայրերի (հասցեներ) վերաբերյալ տեղեկատվությունը պարունակող՝ Պատվիրատուի կողմից Կատարողին տրամադրվող գնահատման առաջադրանքի հիման վրա:
Ըստ անհրաժեշտության առաջադրանքը կարող է պարունակել գույքի վիճակի, դրա նկատմամբ գրանցված սահմանափակումների, դրա նպատակային ու գործառնական նշանակության մասին տեղեկություններ և այլ նյութեր:

**1. Ծառայությունները պետք է մատուցվեն ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ներառյալ.**

-«Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին»
-«Հայաստանի Հանրապետությունում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 24 օգոստոսի 2022 թվականի N 1355-Ն որոշումը,
-«Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 27-ը մարտի 1998 թվականի N 209 որոշումը:
- Այլ իրավական ակտեր,որոնք ենթակա են կիրառման կախված գնահատվող գույքի տեսակից, գույքի կարգավիճակից, գնահատման նպատակից և գնահատման համար էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներից:

**2.Գնահատման ստանդարտներ.**

**Կատարողը պետք է ունենա Ծառայությունների մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան որակավորում, իսկ իրավաբանական անձ հանդիսացող կատարողը պետք է որպես գործատու ունենա նման որակավորում ունեցող համապատասխան հիմնական աշխատող (աշխատողներ):**

Կատարողը պետք է լինի անկախ, ծառայությունները պետք է մատուցի Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի համաձայն, որտեղ կնշվեն գնահատվող գույքի անվանման, նպատակային և գործառնական նշանակության տվյալներ:
մասին
Անշարժ գույքի գնահատումը իրականացնելիս պետք է պահպանվեն ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտը, որը պարունակում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքները, քանակական և որակական բնութագրերը, գույքի գնահատման մեթոդները, գնահատման արդյունքների ձևակերպման նկատմամբ պահանջները, գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները:

**Ծառայությունների արդյունքները պետք է ձևակերպվեն գնահատման հաշվետվություններով (էլեկտրոնային տարբերակով և 2 օրինակ տպագիր տարբերակով), որոնք պետք է պարունակեն Կատարողի անվանումը, իրավաբանական հասցեն և գնահատվող գույքի.**

**Գնահատման առաջադրանքը.**

- ելակետային տվյալներն ու դրանք հավաստի աղբյուրներից ստանալը հավաստող փաստաթղթերը,
- նկարագիրը և տեղազննության արդյունքները (ներառյալ՝ բավարար չափով լուսանկարներ),
- տեղազննության ու գնահատման ամսաթվերն ու տարեթվերը,
- ստացված շուկայական արժեքի որոշման մեթոդաբանությունն ու դրա ընտրության հիմնավորումները,

- վերլուծության արդյունքում ձևավորված շուկայական արժեքի գնահաշվարկները,
- գնահատման համար օգտագործվող փաստաթղթերի ցանկը:

Հաշվետվությունները պետք է կազմված լինեն գույքի գնահատման գործընթացներին անծանոթ անձանց համար պարզ և ընկալելի ձևով, իսկ դրանց տպագիր և էլեկտրոնային տարբերակները Կատարողը պետք է առձեռն ներկայացնի Պատվիրատուին՝ սահմանված կարգով փաստաթղթավորված վիճակով:

Ծառայությունների մատուցման արդյունքում Պատվիրատուին ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ կամ այլ թերություններ հայտնաբերվելու դեպքում Կատարողը պարտավոր է այդ մասին ծանուցվելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում անվճար կատարել անհրաժեշտ ուղղումները (շտկումները, փոփոխությունները)՝ Ծառայությունների արդյունքները սահմանված կարգով վերստին ներկայացնելով Պատվիրատուին:

**Հողատարածքների գնահատումը իրականացվում է աճուրդի համար:**

Ծանոթություն:

Վերևում նշված է առավելագույն քանակը և գնահատումը կատարվելու է Պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա: Պատվիրատուի փաստացի կարիքներից ելնելով նախատեսնած քանակը ամբողջությամբ կարող է չպատվիրվել, իսկ մինչև տարվա ավարտը չպատվիրված մասով պայմանագիրը կհամարվի լուծված:

Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ծառայությունների ձեռքբերման ժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից մինչև 30.12.2025թ.:

Մասնակցության ցանկության դեպքում Դուք հայտով պետք է ներկայացնեք Ձեր կողմից հաստատված՝

- ✓ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի.
- ✓ գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայություն | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 70331800 | Անշարժ գույքի(հողամասերի)գնահատման ծառայություններ | | | | | | | | | 34% | 67% | 100 % | 100 % | 100% |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկ**

**ք.Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1**

**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**

**հ/հ 900252101440**

**ՀՎՀՀ 06954104**

-------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<կատարողի հասցե>>

<< կատարողի բանկը>>

Հ/Հ -------------------------

-------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով
մեկ անձով գնման ընթացակարգի հրավերի

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## մեկ անձով գնման ընթացակարգին մասնակցելու

______________________________ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել
մասնակցի անվանումը

______________________________-ի կողմից ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով հայտարարված
պատվիրատուի անվանումը

մեկ անձով գնման ընթացակարգի______________________________ չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

______________________________-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է
մասնակցի անվանումը

______________________________ռեզիդենտ:
երկրի անվանումը

______________________________-ի՝
մասնակցի անվանումը

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ ______________________________.
hարկ վճարողի հաշվառման համարը
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ ______________________________.
էլեկտրոնային փոստի հասցեն
- գործունեության հասցեն է՝ ______________________________.
գործունեության հասցեն

հեռախոսահամարն է՝ ______________________________.
հեռախոսի համարը

Սույնով ______________________________-ն հայտարարում և հավաստում է, որ՝
մասնակցի անվանում

1) ______________________________-ն և իրեն փոխկապակցված անձինք
մասնակցի անվանում

բավարարում են ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով մեկ անձով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և
-ն պարտավորվում է ընտրված
մասնակցի անվանում

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում .

2) ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով մեկ անձով գնման ընթացակարգի մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է իրավերով սահմանված՝ ____________________________________-ին

մասնակցի անվանումը

փոխկապակցված անձանց և (կամ) ____________________________________-ի

մասնակցի անվանումը

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս ____________________________________-ին

մասնակցի անվանումը

պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

Ստորև ներկայացնում է____________________________-ի իրական շահառուների վերաբերյալ

մասնակցի անվանումը

տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ ------------------------------------------------------**

______________________________________________ Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________________ ստորագրությունը)

Կ. Տ.

** - ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝

- Եթե մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս << տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝ >> բառերը փոխարինում է <<հայտարարագիր՝ համաձայն հավելված 1,2-ի>> բառերով,

-եթե մասնակիցը անհատ ձեռնարկատեր է կամ ֆիզիկական անձ, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացնում:

**Հավելված 2**
**ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով**
**մեկ անձով գնման ընթացակարգի հրավերի**

## Գ Ն Ա Յ Ի Ն   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով ՀՀ-ԼՄՍՀ-ՄԱԾՁԲ-25/40 ծածկագրով մեկ անձով գնման ընթացակարգի հրավերը, ________________________________________________-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| Չափա-բաժինների համարներ ը | Ծառայության անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

________________________________________________ ____________________
մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.

***եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա կվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*